

**«ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ**

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) **գիտական գործունեություն**՝ նոր գիտելիքների ձեռքբերմանն ու օգտագործմանն ուղղված ստեղծագործական գործունեություն.

2) **գիտատեխնիկական գործունեություն**՝ տեխնոլոգիական, ճարտարագիտական, տնտեսական, սոցիալական, հումանիտար և այլ հիմնախնդիրների լուծմանն ուղղված գիտական գործունեություն.

3) **հիմնարար գիտական հետազոտություն**՝ բնության, մարդու, հասարակության զարգացման օրինաչափությունների մասին նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված տեսական կամ փորձարարական գիտական գործունեություն.

4) **կիրառական գիտական հետազոտություն**՝ գործնական նպատակների իրականացման և կոնկրետ խնդիրների լուծման նպատակով հիմնականում նոր գիտելիքների ձեռքբերմանն ու օգտագործմանն ուղղված գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն.

5) **ինովացիոն գործունեություն**՝ գիտության, տնտեսության և հասարակության առաջընթացն ապահովող նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացի, ծառայության կամ արտադրանքի ստեղծմանն ուղղված գործունեություն.

6) **փորձարարական մշակում**՝ հիմնարար, կիրառական գիտական հետազոտությունների կամ գործնական փորձի միջոցով ձեռք բերված գիտելիքների վրա հիմնված և մարդու կյանքի ու առողջության պահպանման, նոր նյութերի, արտադրանքի,

ծառայությունների, համակարգերի կամ մեթոդների ստեղծմանը և կատարելագործմանն ուղղված գործունեություն.

7) **գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունք** (այսուհետ՝ գիտական արդյունք)՝ տեղեկատվական ցանկացած կրիչի վրա գրանցված նոր գիտելիք, կիրառական խնդրի նոր լուծում կամ արտադրության մեջ գիտական մշակման և տեխնոլոգիայի ներդրում, նոր նյութի կամ արտադրանքի մոդել, մանրօրինակ, նմուշ.

8) **գիտահետազոտական աշխատանք**՝ գիտական-որոնողական, ինչպես նաև գիտական հիպոթեզների ստուգման, գիտական ընդհանրացման, նոր գիտելիքների ձեռքբերման և (կամ) բնության ու հասարակության զարգացման օրինաչափությունների բացահայտման նպատակով իրականացվող հիմնարար և (կամ) կիրառական գիտական հետազոտությունների և գիտափորձերի հետ կապված հետազոտական աշխատանք.

9) **գիտական կազմակերպություն**՝ գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ.

10) **պետական գիտական կազմակերպություն**՝ պետության կողմից ստեղծված կամ պետության հարյուր տոկոս բաժնեմաս ունեցող գիտական կազմակերպություն.

11) **Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա**՝ իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն, որի կազմակերպական-իրավական ձևի և կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

12) **գիտական կենտրոն**՝ բարձր որակավորմամբ գիտական և ճարտարագիտատեխնիկական աշխատողներ և համապատասխան գիտատեխնիկական բազա ունեցող գիտական կազմակերպություն կամ գիտական կազմակերպությունների միավորում.

13) **հետազոտական համալսարան**՝ կրթական, գիտական և ինովացիոն գործունեության միասնականության սկզբունքի հիման վրա գործող և բարձրագույն ուսումնական հաստատության ու գիտական կազմակերպության գործառույթները զուգակցող կազմակերպություն.

14) **ազգային գիտական լաբորատորիա՝** բարձր որակավորմամբ գիտական և ճարտարագիտատեխնիկական աշխատողներ և համապատասխան գիտատեխնիկական բազա ունեցող ու գիտության և տեխնոլոգիաների զարգացման համապետական նշանակության հիմնախնդիրների լուծմանն ուղղված գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական գիտական կազմակերպություն.

15) **գիտական աշխատող՝** գիտական կազմակերպությունում գիտահետազոտական աշխատանք իրականացնող, գիտական աստիճան ունեցող և գիտական արդյունք ձեռքբերող ֆիզիկական անձ.

16) **ճարտարագիտատեխնիկական աշխատող՝** գիտական կազմակերպությունում աշխատող, բարձրագույն, միջին կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության որակավորման աստիճան ունեցող ու գիտական արդյունքի ձեռքբերմանն աջակցող ֆիզիկական անձ.

17) **գիտական կազմակերպության վարչական պաշտոն՝** գիտական կազմակերպության հիմնարար և (կամ) կիրառական գիտական հետազոտությունների, ինովացիոն կամ տնտեսական գործունեության այլ տեսակների ուղղություններով քաղաքականության մշակման, իրականացման և վերջինիս նպաստող գործընթացների ղեկավարման մեջ ներգրավվելու լիազորություններ ապահովող պաշտոն.

18) **գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտ՝** գիտական աշխատող, գիտամանկավարժական բնագավառի աշխատող, գիտական կազմակերպություն.

19) **գիտական և գիտատեխնիկական փորձաքննություն (այսուհետ՝** գիտական փորձաքննություն)**՝** ստեղծման և ներդրման տարբեր փուլերում գտնվող գիտական արդյունքի կամ փորձարարական մշակման գիտական և (կամ) գիտատեխնիկական մակարդակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման, ինչպես նաև դրա վերաբերյալ որոշում կայացնելու համար հիմնավորված եզրակացություն պատրաստելու նպատակով իրականացվող գործունեություն.

20) **գիտական դրամաշնորհ՝** Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կամ իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պայմաններով գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներին գիտական հետազոտությունների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող ֆինանսական կամ այլ միջոցներ.

21) **գիտության ոլորտ՝** գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացումն ապահովող տնտեսության ոլորտ.

22) **գիտության ոլորտում պետական քաղաքականություն՝** պետության քաղաքականության բաղկացուցիչ մաս, որն արտահայտում է պետության վերաբերմունքը գիտության ոլորտի նկատմամբ, որոշում գիտության ոլորտում պետական մարմինների գործունեության հիմնական նպատակները, սկզբունքները, ուղղությունները և եղանակները.

23) **գիտության ոլորտում պետական կառավարման լիազոր մարմին (այսուհետ՝ լիազոր մարմին)**՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում պետական քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին:

Հոդված 3. Օրենքի հիմնական խնդիրները

1. Օրենքի հիմնական խնդիրներն են՝

1) գիտության ոլորտում պետական քաղաքականության ձևավորման և իրականացման հիմնական նպատակների ու սկզբունքների սահմանումը.

2) լիազոր մարմնի իրավասությունների սահմանումը.

3) գիտական և գիտատեխնիկական գործունեության տնտեսական, սոցիալական և ստեղծագործական ազատության երաշխիքների սահմանումը:

Հոդված 4. Գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն ու սկզբունքները

1. Գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝

- 1) գիտելիքահենք տնտեսության և հասարակության ձևավորման համար բարենպաստ պայմանների ստեղծումը.
- 2) տնտեսության զարգացման նպատակով գիտական արդյունքի ներդրման խրախուսումը, ինովացիոն գործունեությանն աջակցումը.
- 3) երկրի անվտանգության մակարդակի բարձրացմանը և սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող գիտական հետազոտությունների իրականացման առաջնահերթության ապահովումը.
- 4) գիտության ոլորտում ներդրումների խրախուսման պայմանների ստեղծումը.
- 5) գիտության ոլորտում մրցակցությանն ու ձեռնարկատիրական գործունեությանն աջակցելը.
- 6) մտավոր սեփականության իրավական պաշտպանվածությունը և դրա արդյունավետ օգտագործման պայմանների ստեղծումը.
- 7) գիտության ժամանակակից ենթակառուցվածքի և տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորումը.
- 8) հայագիտության զարգացմանը նպաստելը.
- 9) գիտական, գիտատեխնիկական ու ինովացիոն գործունեության և կրթական համակարգի արդյունավետ փոխգործակցության ապահովումը.
- 10) գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանը նպաստելը.
- 11) գիտական և (կամ) գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումն ու պահպանումը, հասարակության մտավոր ներուժի արդյունավետ վերարտադրությունը.
- 12) գիտական և ճարտարագիտատեխնիկական աշխատողների բարեկեցության, նրանց սոցիալական, տնտեսական և իրավական պաշտպանվածության ապահովումը.
- 13) հեռանկարային երիտասարդ գիտական աշխատողների ընտրության և խրախուսման համակարգի ստեղծումը.
- 14) երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը նպաստելը.
- 15) մարդու, հասարակության և երկրի անվտանգությանն աջակցելը.
- 16) երկրի բնապահպանական վիճակի բարելավումը.
- 17) միջազգային գիտական և գիտատեխնիկական համակարգին ինտեգրումը.

18) գիտական և (կամ) գիտատեխնիկական մշակույթի զարգացումը և տարածումը.

19) գիտության հասարակական հեղինակության և գիտական աշխատողի աշխատանքային կարիերայի գրավչության բարձրացումը:

2. Գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

1) գիտության՝ իբրև պետության և հասարակության գործունեության բոլոր ոլորտներում գիտականորեն հիմնավորված մոտեցումների առաջատար դերի ընդունումը.

2) հիմնարար գիտական հետազոտությունների, գիտության և տեխնոլոգիաների գերակա ուղղությունների զարգացման ապահովումը.

3) գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցության զարգացումը.

4) գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտների ստեղծագործական ազատության ճանաչումը:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները գիտության ոլորտում պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման բնագավառում

1. Գիտության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

1) գիտական և գիտատեխնիկական միասնական քաղաքականության իրականացումը.

2) լիազոր մարմնի կարգավիճակի սահմանումը.

3) Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակա ուղղությունների սահմանումը, հայագիտության զարգացման ծրագրերի հաստատումը.

4) գիտահետազոտական աշխատանքների, գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի հաստատումը.

5) պետական գիտական կազմակերպությունների, գիտական կենտրոնների, հետազոտական համալսարանների և ազգային գիտական լաբորատորիաների ստեղծումը,

վերակազմակերպումը և լուծարումը, ինչպես նաև դրանց ստեղծման չափանիշների ու կարգի հաստատումը.

6) ասպիրանտուրայում ուսուցման կարգի հաստատումը.

7) գիտական աստիճանի և կոչումների շնորհման կարգի հաստատումը.

8) գիտական աստիճանի և կոչումների հաստատման ու համապատասխան դիպլոմներով ամրագրման կարգի հաստատումը.

9) պետական գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգի և չափանիշների հաստատումը.

10) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համաձայն գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորումը.

11) գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական բյուջետային ֆինանսավորման կարգերի հաստատումը.

12) գիտության ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավասությունների իրականացումը:

Հոդված 6. Գիտության ոլորտում լիազոր մարմնի իրավասություններն են՝

1. Գիտության ոլորտում լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մշակման և իրականացման կազմակերպումը.

2) գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանը, սոցիալական խնդիրների լուծմանն ու մարդու, հասարակության և պետության անվտանգության ապահովմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացման կազմակերպումը.

3) գիտության ոլորտի զարգացմանն ուղղված բարեփոխումների ծրագրերի մշակումը և իրականացման կազմակերպումը.

4) գիտական ներուժի վերարտադրության և զարգացման ապահովմանն ուղղված ծրագրերի մշակումը և իրականացման կազմակերպումը.

5) գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական բյուջետային ֆինանսավորման գործընթացի իրականացման կազմակերպումը.

6) գիտության ոլորտում մրցույթների կազմակերպումը, գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներին մրցանակների և գիտական դրամաշնորհների տրամադրումը.

7) գիտական արդյունքի առևտրայնացմանը, տնտեսական շրջանառության մեջ ընդգրկմանն ու ինովացիոն գործունեությանն աջակցելը.

8) գիտության ոլորտում միջազգային պայմանագրերով նախատեսված Հայաստանի Հանրապետության պարտավորությունների իրականացումը, միջազգային համագործակցության պայմանագրերի կնքումը և իրականացման կազմակերպումը.

9) գիտության ոլորտում իրավական ակտերի նախագծերի մշակումը և ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն՝

ա. գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակա ուղղությունների և կանխատեսումների՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ,

բ. գիտահետազոտական աշխատանքների, գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ,

գ. ասպիրանտուրայում ուսուցման կարգի,

դ. գիտական աստիճանի և կոչումների շնորհման կարգի և չափանիշների,

ե. գիտական աստիճանի և կոչումների հաստատման ու դիպլոմներով ամրագրման կարգի,

զ. պետական գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգի և չափանիշների,

է. գիտական կենտրոնների, հետազոտական համալսարանների, ազգային գիտական լաբորատորիաների ստեղծման չափանիշների և կարգի՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ,

ը. գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական բյուջետային ֆինանսավորման կարգերի՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ,

10) գիտության ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավասությունների իրականացումը:

Հոդված 7. Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտները

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնում են իրավաբանական և ֆիզիկական անձինք:

2. Պետությունը երաշխավորում է պետական գիտական կազմակերպություններում՝

1) գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտների ստեղծագործական ազատությունը՝ ապահովելով հետազոտությունների ուղղությունների և մեթոդների ընտրության իրավունքը.

2) գիտական և ճարտարագիտատեխնիկական աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացումը:

Հոդված 8. Պետական գիտական կազմակերպությունը

1. Պետական գիտական կազմակերպությունը՝

1) ինքնուրույն է գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեության կազմակերպման, գիտական ու ճարտարագիտատեխնիկական աշխատողների ատեստավորման ձևերի, կարգի և պարբերականության ընտրության հարցերում.

2) որոշում է բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, ինքնուրույն իրականացնում է աշխատողների մրցութային ընտրությունը և բաշխումը.

3) իրավունք ունի օրենքով չարգելված և իր կանոնադրությամբ նախատեսված այլ գործունեության:

2. Պետական գիտական կազմակերպության լիազորություններն են՝

1) գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեության կազմակերպումը, գիտական հետազոտությունների կատարումը.

2) աշխատողների տեղաբաշխումը՝ ըստ կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների.

3) գիտական և ճարտարագիտական աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման գործընթացի կազմակերպումը.

4) հանրապետական և միջազգային գիտական, գիտակրթական և հետազոտական ծրագրերի մասնակցությունը և իրականացումը.

5) ինովացիոն ծրագրերի մշակումը և դրանց արդյունքների իրացումը, ինչպես նաև արտադրության կազմակերպումը.

6) անդամակցությունը Հայաստանի Հանրապետության և միջազգային կազմակերպություններին ու միավորումներին, մասնակցությունը միջազգային կամ օտարերկրյա պետությունների գիտական և գիտատեխնիկական ծրագրերին, օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը:

3. Պետական գիտական կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը:

4. Պետական գիտական կազմակերպությունն օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ կարող է իրականացնել համատեղ գիտական աշխատանքներ և ծրագրեր:

5. Պետական գիտական կազմակերպությունը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 9. Պետական գիտական կազմակերպության կառավարումը

1. Պետական գիտական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած մարմինը, գործադիր մարմինը (տնօրեն, ռեկտոր, նախագահ և այլն): Պետական գիտական կազմակերպության կանոնադրությամբ կարող է նախատեսվել նաև կոլեգիալ կառավարման մարմինների (խորհուրդ, տնօրենների խորհուրդ և այլն) ձևավորում:

2. Պետական գիտական կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգում է գիտական խորհուրդը:

3. Պետական գիտական կազմակերպության գիտական խորհրդի և կառավարման մարմինների թվակազմը, կազմավորման կարգը, խնդիրները, գործադիր մարմնի նշանակման և ազատման կարգը սահմանվում են կազմակերպության կանոնադրությամբ:

Հոդված 10. Գիտական աշխատողի իրավունքները և պարտականությունները

1. Գիտական աշխատողն իրավունք ունի՝

1) իր հետաքրքրություններին, ստեղծագործական ունակություններին, ինչպես նաև համամարդկային ու ազգային արժեքներին համապատասխան ընտրել գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեության ձևեր, ուղղություններ և միջոցներ.

2) գիտական և (կամ) գիտատեխնիկական համատեղ գործունեություն ծավալելու նպատակով միավորվել այլ գիտական աշխատողների հետ և կազմակերպել ժամանակավոր գիտական խմբեր.

3) հրաժարվել այն հիմնարար և (կամ) կիրառական գիտական հետազոտություններին մասնակցելուց, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել մարդու, հասարակության կամ շրջակա միջավայրի վրա.

4) մասնակցել պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսավորվող հիմնարար և (կամ) կիրառական հետազոտությունների համար հայտարարված մրցույթներին.

5) տպագրել և հրապարակել սեփական հետազոտությունների արդյունքները.

6) գիտության զարգացման, տեխնոլոգիաների, գիտական արդյունքների, արտադրության մեջ դրանց ներդրման ու գիտական կադրերի պատրաստման համար արժանանալ գիտական կոչումների, մրցանակների, տիտղոսների, պատվավոր կոչումների.

7) ազատորեն օգտագործել, տարածել և փոխանակել գիտական տեղեկատվություն, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական, ծառայողական, առևտրային և այլ գաղտնիք համարվող տեղեկատվության.

8) զբաղվել մանկավարժական գործունեությամբ, իրականացնել գիտական փորձաքննություն և խորհրդատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

9) գիտական արդյունքները ներկայացնել գիտական զեկուցումների, հրապարակումների ու ատենախոսությունների պաշտպանության եղանակով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ գիտահետազոտական աշխատանքների իրականացման աշխատանքային պայմանագրով.

10) պետական գիտական կազմակերպությունում վարչական պաշտոն զբաղեցնել՝ մինչև 70 տարին լրանալը, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ.

11) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

2. Գիտական աշխատողը պարտավոր է՝

1) գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեությամբ վնաս չհասցնել մարդու կյանքին, առողջությանը և շրջակա միջավայրին.

2) օբյեկտիվորեն իրականացնել գիտական փորձաքննությունը:

Հոդված 11. Գիտական կադրերի պատրաստումը և որակավորումը

1. Գիտական կադրերի պատրաստման հիմնական ձևն ասպիրանտուրան է:

2. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են գիտության դոկտորի գիտական աստիճան՝ ըստ գիտական և գիտատեխնիկական գործունեության մասնագիտությունների, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

3. Գիտության դոկտորի գիտական աստիճան, որպես կանոն, շնորհվում է ասպիրանտուրան ավարտած, համապատասխան կրեդիտները հավաքած, քննությունը (քննությունները) և ստուգարքը (ստուգարքները) հանձնած ու գիտական թեզ պաշտպանած անձին: Ասպիրանտական ուսուցման ժամկետը սահմանվում է առնվազն հինգ տարի:

4. Պրոֆեսորի գիտական կոչումը շնորհվում է գիտության դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր իրենց գործունեության վերջին հինգ տարիներին զբաղվել են գիտամանկավարժական գործունեությամբ կամ առնվազն պաշտպանած գիտական հինգ թեզերի ղեկավար են: Դոցենտի գիտական կոչումը շնորհվում է գիտության դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր իրենց գործունեության վերջին երեք տարիներին զբաղվել են գիտամանկավարժական գործունեությամբ:

5. Գիտական աստիճան շնորհում են գիտական կազմակերպություններին կամ բարձրագույն ուսումնական հաստատություններին առընթեր մասնագիտական խորհուրդները:

6. Գիտական կոչումները շնորհում են գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդները:

Հոդված 12. Պետական գիտական կազմակերպության գիտական աշխատողի ատեստավորումը

1. Պետական գիտական կազմակերպությունում գիտական աշխատողը ենթակա է պարտադիր ատեստավորման՝ պաշտոնն առաջին անգամ զբաղեցնելու կամ ավելի բարձր պաշտոնի հավակնելու ժամանակ: Ատեստավորումը նպատակ ունի պարզել գիտական աշխատողի մասնագիտական գիտելիքների համապատասխանությունը հավակնող պաշտոնին:

2. Պետական գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի ատեստավորումն անցկացվում է առնվազն երեք տարին մեկ անգամ՝ պաշտոնի հավակնորդի գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գիտաչափական գնահատման հիման վրա:

3. Գիտական աշխատողի ատեստավորման կարգի և գնահատման չափանիշների խախտման դեպքում ատեստավորման արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

Հոդված 13. Գիտական աշխատողի աշխատանքի վարձատրությունը և թոշակավորումը

1. Գիտական աշխատողի աշխատանքի վարձատրությունը և կենսաթոշակը պետք է նպաստեն գիտական աշխատանքի հեղինակության բարձրացման ու գիտական ներուժի արդյունավետ վերարտադրության գործընթացին, բավարար նյութական պայմաններ ապահովեն ինքնուրույն և արդյունավետ ստեղծագործական գործունեություն իրականացնելու համար:

2. Պետական գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի վարձատրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատավարձից, պարգևատրումներից, գիտական աստիճանի համար տրվող լրացուցիչ վարձատրությունից և այլ հավելավճարներից:

3. Պետությունը, տարիքային կենսաթոշակի իրավունք, պետական գիտական կազմակերպություններում գիտական և գիտատեխնիկական գործունեության առնվազն 20 տարվա ստաժ և գիտական աստիճան ունեցող անձանց՝ 65 տարին լրանալու ու պետական գիտական և գիտատեխնիկական ծրագրերում ընդգրկված չլինելու դեպքում, կենսաթոշակից բացի, տալիս է ամենամսյա լրավճար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտական աշխատողներին գիտական աստիճանի համար տրվող ամենամսյա հավելավճարների չափով:

Հոդված 14. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորումը

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման աղբյուրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն.

2) հիմնադրամները, օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների հատկացումները, քաղաքացիների ներդրումները.

3) դրամաշնորհները.

4) վարկերը.

5) գիտական արդյունքների ներդրումից և իրացումից գոյացած միջոցները.

6) գիտական, գիտատեխնիկական, հրատարակչական, խորհրդատվական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեությունից գոյացած միջոցները:

2. Գիտության ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորումն իրականացվում է ծրագրային սկզբունքով՝ գիտական փորձաքննության միջոցով:

3. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական բյուջետային ֆինանսավորման ձևերն են բազային, նպատակային և գիտական դրամաշնորհային՝

1) բազային ֆինանսավորումը հատկացվում է պետական գիտական կազմակերպություններին՝ գիտահետազոտական աշխատանքների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական ենթակառուցվածքների

պահպանման ու զարգացման, ինչպես նաև գիտական կադրերի պատրաստման նպատակով.

2) նպատակային ֆինանսավորումն իրականացվում է մրցութային հիմունքներով և հատկացվում է գիտական կազմակերպություններին՝ գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակա ուղղություններին համապատասխանող, հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և գիտամշակութային հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը, հասարակության կենսական պահանջների բավարարմանը, արտաքին շուկա մրցունակ արտադրանքի արտահանմանն ուղղված համալիր ծրագրերի իրականացման նպատակով: Նպատակային ծրագրերը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով.

3) գիտական դրամաշնորհային ֆինանսավորումն իրականացվում է մրցութային հիմունքներով և հատկացվում է գիտական աշխատողներին և գիտահետազոտական խմբերին՝ դրանց նախաձեռնությամբ ներկայացված հետազոտական ծրագրերի իրականացման նպատակով:

4. Պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային և գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ծավալների միջև համամասնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով:

5. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման համար յուրաքանչյուր տարի պետական բյուջեի ծախսային մասում նախատեսվում են նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամտային մասի աճին համամասնորեն ավելացող գումարից ոչ պակաս հատկացումներ:

Հոդված 15. Գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցությունը

1. Գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցությունն իրականացվում է լիազոր մարմնի, շահագրգիռ գերատեսչությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

2. Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց և գիտական կազմակերպությունների հետ համատեղ կարող են ստեղծվել լաբորատորիաներ, գիտական կազմակերպություններ և կենտրոններ:

Հոդված 16. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետը չի տարածվում այն անձանց վրա, որոնք ընտրվել (նշանակվել) են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը: Նրանք պաշտոնավարում են սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված իրավահարաբերությունները տարածվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն ուժի մեջ մտած համապատասխան իրավական ակտերի փոփոխման կամ գործողության դադարեցման դեպքերում:

3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից գիտական աստիճանները և (կամ) կոչումները, որոնք շնորհվել են մինչև 1994 թվականը, պահպանում են իրենց իրավաբանական ուժը և հավասարեցվում են դրանից հետո շնորհված գիտական աստիճաններին և (կամ) կոչումներին:

Հոդված 17. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից՝ ուժը կորցրած ճանաչել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) մշակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 122-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 102-րդ կետի: Նախագծի ընդունումը նախատեսված է նաև ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 17-ի նիստի N 35 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցի 1.1 կետով:

Հայաստանի Հանրապետության տնտեսության առաջընթաց զարգացման համար կարևորագույն ռազմավարական խնդիր համարելով գիտության և տեխնիկայի զարգացումն ու տեխնոլոգիական առաջընթացը, անհրաժեշտ է ապահովել այդ ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության արդյունավետության բարձրացումը: Այդպիսի քաղաքականության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է գիտական և գիտատեխնիկական գործունեության ժամանակակից մեթոդների ներդրումով ու արդյունավետ իրականացումով:

Ներկայումս գործող «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին և, կապված գիտության ոլորտում տեղի ունեցած բարեփոխումների հետ, այն կարիք ունի էական փոփոխությունների, մասնավորապես, միջազգային համատեքստում անհրաժեշտ է օրենքը համադրելի դարձնել օտարերկրյա պետությունների օրենքների հետ: Օրենքով անհրաժեշտ է հաշվի առնել նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից 2015 թվականի ապրիլի 7-ին ընդունված «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքը,

ինչպես նաև հստակեցնել մի շարք հասկացություններ, ներմուծել նոր հասկացություններ և ընդգրկել նոր հոդվածներ:

Մասնավորապես, հստակեցման կարիք ունեն գիտության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության և պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները, անհրաժեշտ է միջազգային չափանիշներին համապատասխանեցնել գիտական կադրերի պատրաստման մեխանիզմները, կանոնակարգման կարիք ունեն գիտական աշխատողի աշխատանքի վարձատրության և թոշակավորման, ինչպես նաև գիտության ոլորտում օտարերկրյա ներդրումների հետ կապված հարաբերությունները:

Առաջարկվող փոփոխությունների և լրացումների ծավալը մեծ է, ինչի պատճառով էլ գործող օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու փոխարեն առաջարկվում է ընդունել նոր օրենք:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի իրավահարաբերությունների բարելավման և արդիականացման նպատակով օրենքում ժամանակակից հասկացությունների և նոր հոդվածների ներմուծում: Նախագծով առաջարկվող սկզբունքային նշանակություն ունեցող հիմնական նոր հասկացություններից են՝ հետազոտական համալսարան, ազգային գիտական լաբորատորիա, ճարտարագիտատեխնիկական աշխատող, գիտական դրամաշնորհ և այլն: Ներմուծվել է գիտական աշխատողի աշխատանքի վարձատրության և թոշակավորման նոր դրույթ, և նախագծի 13-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ պետությունը, տարիքային կենսաթոշակի իրավունք, պետական գիտական կազմակերպություններում գիտական և գիտատեխնիկական գործունեության առնվազն 20 տարվա ստաժ և գիտական աստիճան ունեցող անձանց՝ 65 տարին լրանալու ու պետական գիտական և գիտատեխնիկական ծրագրերում չընդգրկված լինելու դեպքում, կենսաթոշակից բացի, տալիս է ամենամսյա լրավճար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտական աշխատողներին գիտական աստիճանի համար տրվող ամենամսյա հավելավճարների չափով:

Գիտության մեջ սերնդափոխության հիմնախնդրի լուծմանն է միտված գիտական կազմակերպությունում վարչական պաշտոն զբաղեցնելու իրավունքի տարիքային սահմանափակման մասին դրույթը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի ընդունումը հնարավոր կդարձնի ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի համապատասխանեցումը գիտության զարգացման արդի վիճակին և միջազգային չափանիշներին, կնպաստի Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի առաջընթացին և դինամիկ զարգացմանը: